

Հաճախակի տրվող հարցեր

- 1. Ինչպիսի՞ վարկեր է առաջարկում Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը բնակելի անշարժ գույքի համար:**
Մենք տրամադրում ենք վարկեր անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և գոյություն ունեցող վարկերի վերաֆինանսավորում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:
- 2. Ի՞նչ է պետք անել վարկի դիմումը հաստատվելուց հետո:**
Երբ վարկը հաստատվում է և Բանկն ունի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Բանկի ներկայացուցիչները պատրաստում են համաձայնագրերը և զանգահարում հաճախորդին՝ նոտարական գրասենյակում հանդիպելու նպատակով: Վարկը տրամադրվում է բոլոր համապատասխան փաստաթղթերը (ապահովագրության վկայական, անշարժ գույքի հիփոթեքի/սեփականության իրավունքի վկայական, գնահատման հաշվետվություն, միասնական տեղեկանք անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից բնակելի անշարժ գույքի առկա սահմանափակումների վերաբերյալ) Բանկ ներկայացնելուց հետո:
- 3. Կարո՞ղ եմ արդյոք ձեռք բերվող բնակարանի փոխարեն գրավ դնել մեկ այլ բնակարան:**
Հաճախորդը կարող է գրավ դնել այլ անշարժ գույք միայն այն դեպքում, եթե նոր անշարժ գույքը ձեռք է բերվում առաջնային շուկայում: Այս դեպքում ձեռք բերվող անշարժ գույքը կարող է չունենալ համապատասխան սեփականության վկայական: Գրավը պետք է փոփոխվի, երբ ստացվեն (վարկը ստանալուց առավելագույնը 12 ամսվա ընթացքում) նոր անշարժ գույքի իրավաբանական փաստաթղթերը (սեփականության վկայական):
- 4. Կարո՞ղ եմ արդյոք գնել այն տարածքը, որի վրա պատրաստվում եմ տուն կառուցել:**
Ոչ, ներկայումս «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» բնակելի անշարժ գույքի կառուցման նպատակով հողատարածքի ձեռքբերման վարկեր չի տրամադրում:
- 5. Արդյո՞ք Էյչ-Էս-Բի-Սի Բանկը տրամադրում է վարկեր տան կառուցման համար:**
Ոչ, ներկայումս «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» չի տրամադրում կառուցման վարկեր:
- 6. Անշարժ գույքի վարկի նախնական հաստատումից հետո որքա՞ն ժամանակ ունեմ բնակարան գտնելու համար:**
Վարկի նախնական հաստատումից հետո հաճախորդն ունի մինչև մեկ ամիս տուն կամ բնակարան գտնելու համար:
- 7. Ընդունելի՞ է արդյոք, երբ առքուվաճառքի պայմանագրում նշված գումարը տարբերվում է գնահատման ակտում նշված գումարից:**
Առքուվաճառքի պայմանագրի և գնահատման հաշվետվության մեջ նշված գումարների կարող են չհամընկնել: Հաշվի է առնվում տվյալ փաստաթղթերում (Առքուվաճառքի պայմանագիր և գնահատման հաշվետվություն) նշված թվերից ամենափոքրը, որը, ընդ որում, չպետք է լինի ավելի փոքր, քան արդեն հաստատված վարկի գումարի վարկ/գրավ հարաբերակցությունը:

- 8. Կիրառվում է արդյոք տուգանք վարկի վաղաժամկետ մարման համար:**
Վարկի ժամկետի առաջին 2 տարիների ընթացքում վարկի հիմնական գումարի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում բանկը կարող է կիրառել տուգանք, որը հավասար է ավել վճարված գումարի 10%-ի չափին, սակայն ոչ պակաս քան 5,000 ՀՀ դրամը և ոչ ավելի քան 300,000 ՀՀ դրամը:
- 9. Դիմելուց հետո որքա՞ն ժամանակ կպահանջվի վարկը ստանալու համար:**
- Վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշման կայացման և Հաճախորդին որոշման մասին տեղեկացնելու ժամկետը հաճախորդի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն Բանկի պահանջի, ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
 - Վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը – վարկային պայմանագիրը ստորագրելուց, վարկային պայմանագրով սահմանված ապահովման միջոցների վերաբերյալ պայմանագիրը պատշաճ վավերացնելուց, գրավի առարկաները ապահովագրելուց, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված վճարումը կատարելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- 10. Կարո՞ղ եմ արդյոք դիմել և ստանալ անշարժ գույքի վարկ կառուցման մեջ գտնվող տան համար:**
Այո, եթե տունը դեռ կառուցման ընթացքում է, և համապատասխան սեփականության վկայական դեռ չկա, ապա հաճախորդը կարող է որպես գրավ դնել մեկ այլ անշարժ գույք (վարկ/գրավ հարաբերակցությանը համապատասխան): Հետագա 12 ամիսների ընթացքում, սեփականության վկայականը ստանալուց հետո գրավը ենթակա է փոփոխման:
- 11. Պարտադի՞ր է արդյոք վեց ամիս անց վերագնահատել անշարժ գույքը վերանորոգման վարկի դեպքում:**
Լիազորված անկախ գնահատող կազմակերպության կողմից տրվող գնահատման հաշվետվությունը հանդիսանում է վերանորոգման իրականացման ապացույց և պետք է ներկայացվի վարկի տրամադրման օրվանից վեց ամիս հետո:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00